ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

17.10.2014թ. գ. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտատարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ ԻՄ Հեռակա ուսուցման համակարգում դասավանդման արդյունավետության բարձրացման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների մասին: /Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/

2. ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական ծրագրի 2011-2015թթ. կատարման ընթացքի մասին: /Զեկուցող՝ Մ. Ա. Ճաղարյան/

3. ԵՊՀ ԻՄ-ում «Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոն» ստեղծելու մասին: /Զեկուցող՝ Ս. Ա. Առաքելյան/

4. Ընթացիկ հարցեր /գնկ. Մ.Ս.Աթոյան/

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին -«ԵՊՀ ԻՄ Հեռակա ուսուցման համակարգում դասավանդման արդյունավետության բարձրացման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների մասին» հարցի կապակցությամբ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը /Կցվում է/, և ներկայացրեց հեռակա ուսուցման բաժնի կրթության որակի բարելավմանն ուղղված առաջարկների նախագիծ:

Արտահայտվեցին – ԵՊՀ պրոռեկտոր Ա. Գ. Գրիգորյանը, ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Հ. Զուրարյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման բաժնի կրթության որակի բարելավմանն ուղղված առաջարկների նախագիծը :

Լսեցին -«ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական ծրագրի 2011-2015թթ. կատարման ընթացքի մասին» հարցի կապակցությամբ Մ. Ա. Ճաղարյանի զեկույցը /կցվում է/

Արտահայտվեցին – տնօրեն Ս.Ա. Առաքելյանը, պրոռեկտոր Ա.Գ. Գրիգորյանը, տնօրենի խորհրդական Ա.Հ. Մակարյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

2. Հանձնարարել ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետին 2014թ. դեկտեմբերի գիտխորհրդի նիստին ներկայացնել 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի կատարողականը:

Լսեցին -«ԵՊՀ ԻՄ-ում «Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոն» ստեղծելու մասին» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը, նա կարևորելով երիտասարդ դասախոսներին դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և աջակցման կարևորությանը, և այդ գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը առաջարկեց ԵՊՀ ԻՄ-ում ստեղծել «Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոն»:

Արտահայտվեցին – տնօրեն Ս.Ա. Առաքելյանը, պրոռեկտոր Ա.Գ. Գրիգորյանը, տնօրենի խորհրդական Ա.Հ. Մակարյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

3. ԵՊՀ ԻՄ-ում ստեղծել «Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոն»:

Ընթացիկ հարցեր

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում դասալսումների անցկացման կանոնակարգի հաստատման վերաբերյալ հարցը :

Արտահայտվեցին – գիտական խորհրդի քարտուղար Մ.Աթոյանը, և հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, իրավախորհրդատու, ԱԿԲ բաժնի վարիչ Ա. Հովհաննիսյանը, ԿՈԱԳ բաժնի վարիչ Ա. Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

4. Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում դասալսումների անցկացման կանոնակարգը:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կազմում փոփոխություն կատարելու մասին հարցը :

Արտահայտվեցին –Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը, գիտական խորհրդի քարտուղար Մ. Ս. Աթոյանը.

ՈՐՈՇԵՑԻՆ

5. Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի փոխված կազմը, համաձայն հավելվածի:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգի մասին հարցը :

Արտահայտվեցին –Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը, գիտական խորհրդի քարտուղար Մ. Ս. Աթոյանը, ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը և այլոք:

ՈՐՈՇԵՑԻՆ

6. Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը, համաձայն հավելվածի:

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կողմից կազմակերպված պրակտիկայի գնահատման կանոնակարգի մասին հարցը :

Արտահայտվեցին –Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը, ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը և այլոք:

ՈՐՈՇԵՑԻՆ

7. Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կողմից կազմակերպված պրակտիկայի գնահատման կանոնակարգը, համաձայն հավելվածի:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար Մ.Ս. ԱԹՈՅԱՆ

17.10.2014թ.